ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՂՕԹՔ.

I.

Ողջո՛ւն հայրենիք, ողջո՛ւն բուրաստան,
Ո՛վ դու բերկրալի երկիր եդեմեան,
Ահա՛ եկել է քո պանդուխտ որդին,
Նուիրում է քեզ իր կեանքն ու հոգին:
Բայց, աւա՜ղ, ինչո՞ւ այս ուրախ ժամում
Միայն տխրութիւն տիրեց իմ սրտում,
Եւ քո միգապատ լեռների նման
Ես էլ քարացայ, մնացի տրտում:
Սեւ սեւ ամպերը ամէն մի կողմից
Եկան, կուտուեցին դժբաղդիս գլխին...
Սիրտս խաւարեց ու յանկարծ նորից
Ինձ պաշարեցին ցաւերը հին-հին:

II.

Թշուա՜ռ հայրենիք, այս ի՞նչ եմ տեսնում:
Տարիներ, դարեր սահեցին, անցան,
Բայց քո տանջանքին դեռ չեղաւ վախճան.
Ամէն տեղ հրդեհ, լաց, սով, տառապանք,
Ամէն օր կապանք, մահ ու աքսորանք—
Եւ խեղճ գիւղացու վաստակը դաշտում
Մնում է՝ փտում արեան գետերում,
Իսկ նրա եզը՝ դեռ լուծը վզին՝
Դարձել է արդէն գայլերի քաժին:
Ո՜հ, ի՜նչ սոսկալի տխուր մերկութիւն,
Ի՜նչ սարսափելի կեանքի դառնութիւն:

III.

Ահա՛ յուսահատ, որքիկ զեղջկուհին
Ուսին կապելով փոքրիկ մանչուկին,
Մուրացկանի պէս՝ մերկ ու վշտահար՝
Անցնում է գնում մի օտար աշխարհ...
Բայց ո՞վ կը լինի խեղճերին պաշտպան,
Ասա՛, հայրենիք, ասա՛, սիրեկան.
Եւ քո կենսատու, անոյշ ջրերից
Ծարաւ աղքատին մի քաժին կը տա՞ն...
Տխրալի օրեր, օրեր հոգեհան
Մընաց մանչուկին տանել յաւիտեան,
Եւ մայրը նրան մի անապատում
Պիտի օրօրէ Հազարի նման:

IV.

Ո՛վ Դու երկնային արդար Դատաւոր,
Աղօթում եմ ես՝ կանգնած գլխակոր.
Այդ խղճուկ որքը—իմ եղբօր որդին
Ցանցնուած է, տէ՛ր, արդ քո սուրբ կամքին.
Տե՛ս՝ անբաղդ մայրը ամայի դաշտում
Մոլորուած՝ նստած, ողբում է, սգում.
Իսկ նրա քաղցած ու ծարաւ որդին
Մատնուած է արդէն մահուան տագնապին...
Հին Բերսաբէի չոր անապատում
Հազարն էր մի օր այդպէս արտասուում,
Եւ նրա ձայնը բարձրից լսեցիր,
Իսկ այս խեղճերին ինչո՞ւ չես լսում:
Ողորմի՛ր դրանց, աղաչում եմ քեզ.
Այդ մերկ որքերին մի՛ թողնիր անտես.
Ծագի՛ր վերջապէս մի լոյս խնդութեան,
Պարգեւի՛ր դրանց մի յոյս փրկութեան...

Ա. ԾԱՄԲԿՈՆԵԱՆ



ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ Մ. ԿԱՂ. ԵՒ ԳԻՐՔ ԹՂԹՈՑ ԱՆԱՆԻԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

(Շարունակութիւն)

Ա.

Արդէն Անանիայի կաթուղիկոսի կոնդակից, որը քաղուածք է Աղուանից պատմութիւնից, չորս հատուած հրատարակեցինք, օրինակների բազմազան տարբեր ընթերցուածներով։ Որպէս զի հետաքրքրուողները գաղափար կազմեն թէ ինչպէս 1289 թուականի Աղուանից պատմ. հիմնական օրինակից ընդօրինակուելով մինչև 1829 թուականը և այս թուականից էլ մինչև 1860-ական թուականները (Աղուանից պատմութեան տպագրութեան տարին) որքան փոփոխութիւններ և կամայականութիւններ են մտած բնագրի ընդօրինակութիւնների և տպագրութեանց մէջ, այս մասին գաղափար կազմելու համար բաւական ենք համարում հրատարակած հատուածների տարբեր ընթերցուածները ծանօթութեանց մէջ. իսկ այսուհետև միայն երկաթագիր օրինակի և երկրորդ խմբին պատկանող օրինակների տարբեր ընթերցուածները կը դնենք ծանօթութեան մէջ։